Շահերի բախում

1. Տեղեկացնում ենք, որ շահերի բախման իրավիճակում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) համար անընդունելի է ընկերությունների և անձանց (այսուհետ՝ Կոնտրագենտ) մասնակցությունը Բանկի գնումների գործընթացին՝ բացառությամբ, երբ նման իրավիճակը բացահայտված կլինի Կոնտրագենտի կողմից և ընդունելի՝ Բանկի համար: Բանկն իրավասու է ցանկացած պահի դադարեցնելու Կոնտրագենտի հետ մեկնարկած գնման գործընթացը (այդ թվում՝ միակողմանիորեն լուծելու դրա շրջանակներում կնքված պայմանագրերը/համաձայնագրերը) և պահանջելու վնասների հատուցում քողարկված շահերի բախման իրավիճակի հայտնաբերման պարագայում:

1.1. Սույն կետի իմաստով շահերի բախման իրավիճակ է համարվում

1.1.1. Կոնտրագենտի, վերջինիս աշխատողների, փոխկապակցված անձանց, փոխկապակցված անձանց աշխատողների և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի աշխատողների, փոխկապակցված անձանց, փոխկապակցված անձանց աշխատողների ընկեր, գործընկեր, նախկին գործընկեր, մերձավոր ազգան լինելու առնվազն մեկ դեպքի առկայությունը:

1.1.1.1. Սույն կետի իմաստով մերձավոր ազգական է համարվում ամուսինը, ծնողը, ամուսնու ծնողը, զավակը, ամուսնու զավակը, զավակի ամուսինը, ամուսնու զավակի ամուսինը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, պապը, տատը, թոռը, ծոռը, ամուսնու հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, պապը, տատը, թոռը, ծոռը, եղբոր կամ քրոջ ամուսինը, զավակը, ամուսնու եղբոր կամ քրոջ ամուսինը, զավակը, որդեգրողը կամ որդեգրվածը, ամուսնու որդեգրողը կամ որդեգրվածը:

1.1.1.2. Սույն կետի իմաստով գործընկեր է համարվում միևնույն գործատուի աշխատողը համարվելու հանգամանքը:

1.1.1.3. Սույն կետի իմաստով նախկին գործընկեր է համարվում միևնույն գործատուի նախկին աշխատողը համարվելու հանգամանքը:

1.1.1.4. Սույն կետի շրջանակներում «աշխատող» եզրույթը ենթակա է մեկնաբանման ՀՀ աշխատանքային օրենսգրքի լույսի ներքո:

1.1.1.5. Սույն կետի իմաստով շահերի բախումը համարվում է քողարկված, երբ Կոնտրագենտը գիտեր, կարող էր կամ պարտավոր էր իմանալ դրա մասին, սակայն չի տեղեկացրել Բանկին:

1.2. Շահերի բախման իրավիճակ առկա է նաև Կոնտրագենտի, վերջինիս աշխատողների, փոխկապակցված անձանց, փոխկապակցված անձանց աշխատողների և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, վերջինիս աշխատողների, փոխկապակցված անձանց, փոխկապակցված անձանց աշխատողների միջև ՀՀ օրենսդրությամբ սահմանված փոխկապակցվածության ցանկացած այլ դրսևորման առկայության պարագայում: